The Council of Europe is the continent's leading human rights organization. It comprises 47 member states, 28 of which are members of the European Union. All Council of Europe member states have signed up to the European Convention on Human Rights, a treaty designed to protect human rights, democracy and the rule of law. The European Court of Human Rights oversees the implementation of the Convention in the member states.

**www.coe.int**

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկվում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

ENG
HYE

# Strengthening the Application of European Human Rights Standards in the Armed Forces in Armenia

# Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում




**Council of Europe**
**Directorate General of Human Rights and Rule of Law (DGI)**
**Human Rights National Implementation Division**

**Council of Europe Office in Yerevan**
**Erebuni Plaza, 6th floor, 26/1 V.Sargsyan str.,**
**Yerevan 0010, Armenia**

**http: //www.coe.am**

Եվրոպայի խորհուրդ
Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության
գլխավոր տնօրինություն
Մարդու իրավունքների ազգային իրականացման վարչություն

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում
Էրեբունի Պլազա, Վազգեն Սարգսյան փողոց 26/1, 6-րդ հարկ
Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն

**http: //www.coe.am**

UK Conflict, Stability and Security Fund

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

The Council of Europe (CoE) continues to support its member states to implement European human rights standards at national level through revision of legislation, capacity development and exchange of best practices. The Committee of Ministers of the CoE has consolidated the most important principles and standards relating the human rights and fundamental freedoms of members of the armed forces in its Recommendation (2010)4, stressing the importance for all member states to ensure the compliance with the requirements of those provisions.
To contribute to this process, the CoE is implementing a project on "Strengthening the application of European human rights standards in the armed forces in Armenia", generously funded by the UK Government's Conflict, Stability and Security Fund (CSSF) and the CoE. The Project is included in the CoE Action plan for Armenia 2015-2018 and lasts 28 months (October 2016 – January 2019). Human Rights in the armed forces is also a key element of the National Human Rights Strategy (2012) and its Action Plan adopted by the Armenian authorities (2014).

## Project Objectives

The main objective of the Project is to contribute to a better protection of human rights in the armed forces in Armenia.
The specific objectives are to improve the national capacity to apply European human rights standards in the armed forces and to improve the prevention, identification, referral and handling of human rights violations in the armed forces, with a particular focus on ill-treatment.

## Target groups and final beneficiaries

The main target groups are the members of the armed forces at large, staff of the Ministry of Defence (MoD), staff of the Human Rights Defender, as well as military prosecutors, investigators, military police officers, representatives of judiciary and civil society organizations.
The final beneficiaries are the members of the armed forces, including conscripts, as well as civilians affected by activities of the military who will enjoy a better protection of their rights.

## Project results

It is expected that as a result of the Project:
- The relevant military legislation will be reviewed and advanced to make it compliant with international and European human rights standards;
- The capacity of the Human Rights and Integrity Building Centre of the MoD to ensure human rights compliance and promote them within the armed forces and the MoD will be enhanced;
- Human rights awareness will be raised among members of the armed forces, and their access to relevant information on European human rights standards will increase;
- The regulatory framework and institutional mechanisms to prevent and address human rights violations in the armed forces will be reviewed and strengthened;
- Prevention of human rights violations and external monitoring of the situation with their observance in the armed forces will improve;
- Effectiveness of investigation and other procedures concerning ill-treatment, non-combat deaths and other serious human rights violations in the armed forces will improve.

## Activities and methodology

The Project uses a comprehensive approach and is based on a combination of concrete tailor-made and demand-driven activities:
- Legislative expertise provided to identify particular weaknesses, inconsistencies and areas where further legislative reforms are needed, including a review of the existing military legislation and disciplinary regulations with the view to establishing their compatibility with the ECHR;
- Institutional strengthening through the development of the capacity of the Human Rights and Integrity Building Centre and of the NPM/Human Rights Defender;
- Capacity-development and awareness raising on human rights for military commanders and other personnel, law enforcement officers, military prosecutors and representatives of judiciary, achieved through the development of training materials, training-of-trainers, workshops and seminars, study visits to the CoE, including the European Court of Human Rights, translations and publications etc. All training activities are to be carried out in close co-operation with the CoE HELP Programme.

## National Project partners

The key national partner of the Project is the Ministry of Defence. The Project will also closely cooperate with the Human Rights Defender, law-enforcement bodies acting in the armed forces, representatives of the judiciary and civil society.

## Financial support

The Project is generously funded by the UK Government's Conflict, Stability and Security Fund (CSSF) and the Council of Europe.

Եվրոպայի Խորհուրդը (ԵԽ) շարունակում է աջակցել իր անդամ պետություններին կիրառել մարդու իրավունքների եվրոպական չափանիշները ներպետական մակարդակում՝ օրենսդրության վերանայման, կարողությունների զարգացման և լավագույն փորձի փոխանակման միջոցով: ԵԽ-ի Նախարարների կոմիտեն թիվ 4 (2010թ.) Հանձնարարականում է մեկտեղել զինված ուժերում մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող կարևորագույն սկզբունքներն ու չափանիշները՝ ընդգծելով բոլոր անդամ պետությունների կողմից այդ դրույթների պահանջներին համապատասխանելու առաջնայնությունը:
Այս գործընթացին աջակցելու նպատակով ԵԽ-ն իրականացնում է «Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում» ծրագիրը, որը ֆինանսավորվել է Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի և ԵԽ-ի կողմից: Ծրագիրն ընդգրկված է ԵԽ-ի 2015 - 2018 թվականների գործունեության Ծրագրում և տևելու է 28 ամիս (Հոկտեմբեր, 2016 – Հունվար, 2019): Զինված ուժերում մարդու իրավունքները նաև Հայաստանի իշխանությունների կողմից ընդունված Մարդու իրավունքների ազգային ռազմավարության (2012թ.) և դրա Գործողությունների ծրագրի (2014թ.) առանցքային տարրն է:

## Ծրագրի նպատակները

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանն աջակցելն է: Հատուկ նպատակներն են բարելավել Հայաստանում զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման կարողությունը և կատարելագործել զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների, հատկապես՝ վատ վերաբերմունքի, կանխումը, հայտնաբերումը, հաղորդումը և քննությունը:

## Թիրախային խմբերը և վերջնական շահառուները

Հիմնական թիրախային խմբերն են զինված ուժերի ներկայացուցիչներն՝ ընդհանուր առմամբ, պաշտպանության նախարարության աշաատակազմը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, ինչպես նաև զինվորական դատախազները, քննիչները, ռազմական ոստիկանության ծառայողները, դատական համակարգի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:
Վերջնական շահառուներն են զինված ուժերի ներկայացուցիչները, այդ թվում՝ պարտադիր ժամկետային զինծառայողները, ինչպես նաև զինվորականների գործունեության ազդեցությանը ենթարկված քաղաքացիները, որոնց իրավունքներն առավել պաշտպանված կլինեն:

## Ծրագրի արդյունքները

Ակնկալվում է, որ Ծրագրի արդյունքում՝
- Կվերանայվի և կկատարելագործվի զինվորական ոլորտը կարգավորող օրենսդրությունը՝ համապատասխանեցնելով այն միջազգային և եվրոպական չափանիշներին,
- Կկատարելագործվեն պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի կարողությունները՝ մարդու իրավունքների պահանջներին համապատասխանությունն ապահովելու և դրանք զինված ուժերում ու պաշտպանության նախարարությունում խթանելու համար,
- Կբարձրացվի զինված ուժերում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, և կընդլայնվի մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին առնչվող տեղեկատվության հասանելիությունը,
- Կվերանայվեն և կկատարելագործվեն զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների կանխմանն և ճիշտ ուղղորդմանը վերաբերող իրավակարգավորումները և դրանց ինստիտուցիոնալ մեխանիզմները,
- Կբարելավվի մարդու իրավունքների խախտումների կանխման և օրենսդրության պահանջների կատարման վիճակի արտաքին վերահսկողությունը,
- Կբարձրացվի վատ վերաբերմունքի, ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի և մարդու իրավունքների այլ լուրջ խախտումների քննության և այլ ընթացակարգերի արդյունավետությունը:

## Գործողությունները և մեթոդաբանությունը

Ծրագիրն հիմված է համակողմանի մոտեցման վրա՝ որոշակի հատուկ հարմարեցված ու պահանջարկից բխող գործողությունների համադրությամբ, այդ թվում՝
- Օրենսդրության փորձաքննություն՝ վեր հանելու բացերը, հակասությունները և այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ են օրենսդրական բարեփոխումներ, ներառյալ՝ զինվորական և կարգապահական ոլորտը կարգավորող օրենսդրության վերանայումը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային համապատասխանեցնելու նպատակով,
- Ինստիտուցիոնալ հզորացում՝ Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի և Մարդու իրավունքների պաշտպանի (ԿԱՄ) կարողությունների զարգացման միջոցով,
- Կարողությունների զարգացում և մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում հրամանատարների և անձնակազմի, իրավապահ մարմինների ծառայողների, զինվորական դատախազների և դատական համակարգի ներկայացուցիչների համար՝ վերապատրաստման նյութերի մշակման, դասընթացավարների վերապատրաստման, սեմինարների և աշխատաժողովների, ԵԽ, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան կատարվելիք ուսումնական այցերի, թարգմանությունների և հրատարակումների միջոցով և այլն: Վերապատրաստման բոլոր միջոցառումները կիրականացվեն ԵԽ Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթական ծրագրի (HELP) հետ սերտ համագործակցությամբ

## Ծրագրի ազգային գործընկերները

Ծրագրի հիմնական ազգային գործընկերը Պաշտպանության նախարարությունն է: Ծրագիրը նաև սերտորեն համագործակցելու է Մարդու իրավունքների պաշտպանի, զինված ուժերում գործունեություն իրականացնող իրավապահ մարմինների, դատական համակարգի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

## Ֆինանսական աջակցությունը

Ծրագիրը ֆինանսավորվել է Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի (ՀԿԱՀ) և Եվրոպայի Խորհրդի կողմից: